



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Q.S. 2494 v. 1.

Chaygwayby typewriter  
to typewriter:

1629

1629

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ» № 1

Ա.Ա.ՏԱԼԻՔ ԵՐԿԻՆՔԸ  
1990

Եկ

ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ

2/ՀՀ



LGN  
1629

Հրատարակութիւն  
ՄԱԿԱՐ ԶՄԵԿԵԱՆԻ

Գլուխ և Հայոց

## ԱՍԴ ԱԼԻՑ ԵՐԿԻՆՔԸ

bh

## ԵՐԿՐՄԳՈՒՆԴ



ՀՐԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

28 1635

41629-60

ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ  
1891

# ՀԱՅՈՒԹԻՒՆ ՕՐԵՆԳՐԱՎԱԼ

ՀԱՅՈՒԹԻՒՆ ԴՐԱՄ

Дозв. ценз. Тифлисъ. 19 Января 1891, г.

Типогр. М. Д. Ротиніанца, на Голов. пр. соб. д. № 41.

ՏՐԱՎՈՐ ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒԹԻՒՆ ԴՐԱՄ

## ԱՍՏՎԱԼԻՑ ԵՐԿԻՆՔԸ

ԵՒ

ԵՐԿԻՆՔ ԱՌԱԽՆՎԱԾ

I

Այն ամենը ինչոր կայ տեսանելի կամ անտեսանելի երկնքում և թէ երկիս վերաց, առում ենք տիեզերք, և այն տեսութիւնը-գիտութիւնը որ խօսում է ամբողջ տիեզերքի մասին, առում է տիեզերագրութիւն (օսմոգրաֆիա): Որովհետև ամբողջ տիեզերքի մէջ չը կայ մի բան, մի առարկայ, որ մարդկային հոգին և միտքը այնքան փառաւորեր և հետաքրքրէր իւր հրաշափառութեամբը որքան աստղալից երկնքը, այդ իսկ պատճառաւ մարդկութիւնը իւր գոյութեան սկզբից մինչև օրս ոչ մի գիտութեան մասի մէջ այնքան ճիգ չէ թափել, որքան տիեզերագրութեան վերաց: Ազադէսով մարդս, դեռ այդ առապելական ժամանակներից, իւր մոլով և աչքերով սկսել է դիտել և հետևել շատ աստղերի և լուսատու մարմինների ունեցած միմեանց հեռաւորութիւնը, շարշումը, ընթացքը և դիրքը:

Զէ թէ հին ժամանակներում, այլ ներկայումս  
էլ հասարակ ժողովրդի մէջ, նամանաւանդ գիւ-  
ղացւոց, ինչպէս պարզ գիշերներին երկնակամարի  
տակ բացօթեաց անող պառաւ կանացք և հո-  
վիւներ հետաքրքրվում են և գիտեն զանազան տե-  
ղեկութիւններ, հեքիաթներ, աւանդութիւններ, պատ-  
մութիւններ և առասպելներ, Գիշերավառի, Լուսա-  
վառի (Արուսեակի Մերկոր և Փայլածուի Վեներա) և  
ունոյ մասին, մասներով ցոց տալով զրանց  
երկնքի յացանի և որոշեալ տեղում, ինչին էլ անուա-  
նում են եօթն-ելքաց (Մեծ արջ համաստեղութեան  
Большая медвѣдица) մէջի եօթն լուսաւոր աստղերին,  
Բազումքի և ահագնի (Геркулесъ) Նամիտուրն (երկք ուղիղ  
գծով աստղերը Հայկ համաստեղութեան մէջ Օրիոնъ),  
Նամ-աստղ (Մեծ-Եռւն համաստեղութեան մէջի մէծ և  
փայլուն աստղին Սարիցъ) Յարդ-գողին (մլեռնայի պոյ) և  
ուրիշ շատ աստղերի, որոնց շատ անգամ արևելքում,  
զանազան քարքանների առաջնորդներ և ճանապար-  
հորդներ այդ աստղերի միջոցով մութ գիշերներին  
գտնում են կորցրած ճանապարհութեան իսկ ծովագնաց  
նախապետները քանի որ գեռ կողմացոցը (компасъ)  
գտնուած չէր—աստղերի օգնութեամբ միայն ուղ-  
ղում էին իրանց նաւի ընթացքը և գտնում ճանա-  
պարհը, ինչպէս այժմ հասարակ նաւերը:

II

Հին դարերում երկինքը ուսումնասիրող գիտ-  
նական մարդիկ, աստղերի գիրքը, ընթացքը միմիան-  
ցից զանազաննելու և մինը միւսի հետ չը շփոթելու  
համար, նրանց բաժանել են զանազան խմբերի և  
անուաննել են այդ խմբերին համաստեղութիւններ, և  
ամեն մի խմբին նայելով նորա աստղերի ուղղու-  
թեանը, գիրքին, չափին, գասաւորութեանը և նմա-  
նողութեանը, յատկացրել են զանազան առարկաների—  
մարդոց, կենդանեաց, բուտոց և այլն անուններ:  
Ինչպէս մի զոց երկու միաչափ միանման փայլող  
աստղերին անուաննել են—երկու որեակներ: Երկար օձա-  
պայտ ուղղութեամբ միանման աստղերին ձևացնելով  
օձ անուաննել են Վիշապ—Օձի համաստեղութիւն,  
իսկ շատ երկար միաձև և միաչափ փայլող աստղե-  
րին նմանեցնելով գետի—Յորդանան և ուրիշ գետեր  
ւն անուաննել եւ այն: Իսկ այն ճանապարհի վերաց,  
սրով մեզ երկրիս բնակիչներիս երկնքի դրից վերա-  
բերութեամբ, որ երեւում է և թւում մեզ թէ արեւը  
և լուսինը ընթանում են այդ ուղղութեան վերաց—  
այդ շրջանում՝ գտնուած համաստեղութեանց անուա-  
նել են կենդանակերպներ կամ Զողիակոսեան շրջան  
(Յօդիայք): Այդ շրջանի վերաց գտնուում են 12 կեն-  
դանամիերակ համաստեղութիւններ, որոնցով ամեն մի

ամսուայ մէջ երկիրս անցնում է մի համաստեղութիւն, կատարելով այդպիսով իւր ընթացքը արևի շուրջը, և այդպէս ամբողջ Մարտ ամսուայ ընթացքում արեգակը մեր վերաբերութեամբ, երկնքի դրից մէջ գտնուում է Խոյ (ՕՅԵՒ) կենդանակերպ համաստեղութեան մէջ Ապրիլին—Յուլ, Մայիսին—Երկուորեակ, Յունիսին—Խեցգետին, Յուլիսին—Առիւծ, Օդոստոսին—Կոյս, Սեպտեմբերին—Կշիռ, Հոկտեմբերին—Կարիճ, Նոյեմբերին—Ազեղնաւոր, Դեկտեմբերին—Այծեղիւր, Յունուարին—Զրհոսն, և Փետրուարին—Զուկն կենդանակերպ համաստեղութիւնների մէջ:

### III

Բայց այն ժամանակից, երբ գիտութեան շնորհիւ հեռադիտակը հնարեցին, աստղալից երկնքում շատ բան յացնուեցաւ և երևաց որ մեղ մեր հասարակ աչքով երևող անթիւ փոքր և մեծ աստղերը—բացի մի քանիսից—բոլորն էլ ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի-մի փայլուն արեգակ՝ ինչպէս մեր արեգակը, և նորանից աւելի մեծ, թէև իրանց ահագին հեռաւորութեան պատճառաւ մեզ շատ փոքր են երևում: Քննելով նկատեցին որ արևի վերայ բծեր կան, լուսնոյ վերայ լեռների նման բաներ, և երկնքի այն տեղերում որտեղ մութն էր երևում մեզ, երևացին անթիւ ու անհամար աստղեր. սկսեցին աւելի կանոնա-

որել իրանց արած հաշիւները, թէ ինչ աստղ որտեղ է երևում—որքան ժամանակ, ինչ գոյնով, երբ ծագում և ինչ ուղղութեամբ ընթանում: Այսպիսով մինչև մեր օրերը—հանճարեղ-աստղագէտները—գիտութեան շնորհիւ և հեռադիտակի միջոցով ոչ թէ դիտել և քննել են երկնային տարածութեան մէջ մօտ երեք հազար միլիոն մղոն, այլ և արել են նշանաւոր գիւտեր, սրամիտ հաշիւներ և յատնի նախագուշակութիւններ: Ասածներիս ապացոյց կարող է լինել այն՝ որ հարիւրաւոր տարիներ առաջ, բուգէ առ բուգէ հաշւում և գուշակում են, որ երկնքի այս ինչ տեղում, այս ինչ օր, այս ինչ ժամին և բուգէին պատահելու է լուսնոյ կամ արևի ինաւարում, կամ երևալու է գիտաւոր աստղ (կոմետա), և իրօք այդպէս էլ պատահում է և կատարւում նոցա գուշակութիւնը:

Երկար փորձեր անելով և ծանալարհորդելով իմացան և գտան, որ ինչպէս երկնային միւս մարմնները, այնպէս էլ մեր երկիրը ձեռվ կըդր է և պատում է արևի շուրջը մէկ տարում (365 օր. 6 ժ. և 54 ր.) իւր առանցքի վերայ պտուելով օր ու գիշերուայ մէջ (24 ժամում), այնպէս որ երեսն արևեր գարձրած ժամանակ լինում է ցերեկ, իսկ հակառակ կողմը գիշեր: Յետոյ նկատեցին, որ աստղերից մի քանիսը անշարժ փայլում են, իսկ մեծ մասը (բո-

լորը) փայլելիս շողշողում, որից յայտնուեցաւ որ,  
անշարժ փայլողները մոլորակներ են, իսկ շողշո-  
ղողները—պալղողները—անշարժ աստղեր կամ արե-  
գակներ ինչպէս մեր արեգակը։ Ինչպէս երկիրը  
պատռում է արեի շուրջը, այնպէս էլ լուսինը պատռում  
է երկրիս շուրջը 28 օր, 49 լուսի և 45 վայրկեանում։

IV

Բացի երկրագնդից արեի շուրջը պատռում են  
ուրիշ մոլորակներ ևս, երկրից աւելի մօտ պատռում  
են Արուսեակը, Փայլածուն, յետոյ երկիրս, Հրանոր  
Լուսնթագը, Երևեակը, Ուրբանոսը և Նեպտունը։  
Արեգակը աւելի մեծ է քան թէ այս իւր շուրջը  
պատռուող մոլորակները, իսկ երկրագնդից մեծ է  
1407000 անգամ, թէեւ մեզ շատ փոքր է երևում։  
Մեր արեգակի շուրջը պատռուող բոլոր մոլորակներին—  
ինչպէս երկրին և գիսաւոր աստղերին—այս բոլոր  
խմբին ասում են Արեգակնալին—համակարգութիւնն  
(солнечная система): Այսպիսի Արեգակնալին համակար-  
գութիւններ, գիտնականները հազարներով են հաշ-  
ում: Յայտնի փիլիսոփայ Կանոնը միայն 2000-ից աւելի  
արեգակներ էր հաշում: Ինչպէս ամբողջ տիեզերքի  
երկնային մարմինները միմեանց հետ կարգաւորուած  
և կապուած են յայտնի զօրութեամբ։ Եւ իրանց  
ընթացքի և շարժման մէջ ձգողական ոյժի զօրու-

թեամբ պահպանում են հաւասարակշռութիւն, այն-  
պէս էլ մեր արեգակը (իւր համակարգութեամբ)՝  
իւր շուրջը պատռուող մոլորակներին քաշում է  
գեպի ինքը—նոցա փոխագարծ ձգողական զօրութեան  
հաւասարակշռութեան հետ։ Եւ ոքքան մոլորակը  
աւելի մօտ է արեին, այնքան աւելի է արեի ձգո-  
ղական ոյժը, որով և արագացնում է մոլորակի  
պատռելը—ընթացքը արեի շուրջը ինչպէս հետեւալ  
գրածներից ևս երեսում է.

I	Երկրից հեռու է 65 միլ մղոն, պատռ.	88 օրում
II	Երկիրը . . . . .	103 , , , , 225
III	Երկիրը . . . . .	143 , , , , 365 <sup>1/4</sup>
IV	Հրանոր . . . . .	215 , , , , 687
V	Լուսնթագը . . . . .	700 , , , , 12 տար.
VI	Երևեակը-Կռոն. 1300	, , , , 29 <sup>1/2</sup>
VII	Ուրբանոսը . . . . .	— , , , , 85 տար.
VIII	Նեպտուն . . . . .	5208 , , , , 164


Ուրեմն արեից ամենից հեռու մոլորակը նեպէ  
տունն է և նորա համար էլ նօրա արեի շուրջը պատճելը  
տեսում է 164 տարի, և մինչեւ որ Նեպտունը արեի  
շուրջը մի շրջան անէ, Երկիրը արդէն 16<sup>1/2</sup> անգամ  
արած կը լինի։ Հեակացիս և Նեպտունի վերայ,  
եղած տարուայ չորս եղանակներից ամեն մինը  
տեսում է 41 տարի։ Մոլորակներից քիչերն են մեզ  
պարզ երևում։ Բացի Արեգից և Փայլածուից,

բոլոր մոլորակները, իրանց արբանեակներն ունին,  
ինչպէս մեր երկիրը ունի մի արբանեակ լուսինը,  
այդպէս էլ միւսները շից մինչև 9 թւով, որոնք ինչպէս  
լուսինը պտտում է արևի շուրջը, և երկիրս իւր  
արբանեակ—լուսնով պտտում է արևի շուրջը, այդ-  
պէս էլ բոլոր մոլորակները իրանց շուրջը պտտող  
արբանեակներով, պտտում են արեգակի շուրջը  
և արեգակային ամբողջ համակարգութիւններն  
ևս իրանց շուրջը պտտուղ երկնային մարմին-  
ներին իրանց հետ առած, պտտում են տիեզերքի-  
կեղոն ուրիշ մեծ արեգակի շուրջը:

V

Լուսինը երկրի շուրջը պտտելով, արևի և երկրի  
մէջ եղած և պատահած ստուերներովը մեջ երկում  
է զանազան ձևով, ուղղութեամբ և դիրքով։ Այդ  
ստուերներովը աւելի ապացուցվեցաւ երկրագնդիս  
կլորութեան ձեր թէ շաժման արագութեան չափը։  
Որովհետեւ մոլորակները և արբանեակները իրանց լոյսը  
ստանում են միմիայն արեգակից, սորա համար  
երբ երկիրը իւր ընթացքի միջոցին ընկնում է  
լուսնոյ և արևի մէջ, այդ ժամանակ պատահում  
է—լուսնոյ խաւարումն, երբ լուսինն է ընկնում արևի  
և երկրի մէջ, այն ժամանակ պատահում է արե-  
գակի խաւարում։ Մեր արեգակի շուրջը ինչպէս

ասացինք պտտում են նաև գիսաւորներ, բայց նոքա  
շրջում են նեղ ընթացքով—ձուաձև (թլուսում) և  
որոնք որքան աւելի մօտենում են արևին իրանց ըն-  
թացքի ժամանակ՝ այնքան աւելի արագ են ըն-  
թանում, այնպէս որ մէկ ժամուայ մէջ մէկ միլիօն  
վերստից աւելի են վազում։ Դորա համար էլ միշտ  
մեզ շուտ են երկում, շուտ էլ անհետանում են և  
երկար ժամանակ մեզ չեն երկում։ Այս գիսաւորները



ԱՐԵՒԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱԻԱՐՈՒՄՆԵՐԻ

թէև շուտով անհետանում են, բայց կրկին որոշեալ  
ժամանակին վերագառնում են դէպի արևը և մեզ  
երկում։ Նոցանից մի քանիսը երեք տարուց—(սրանց  
հեռադիտակով կարելի է նկատել), մի քանիսը վեց

տարում, որոնց թվումն է և Բելի անունով գիտաւորը:  
Գալիլի գտած գիտաւորը ամեն մի 74—75 տարին մի  
անդամ է գալիս և մեղ երեսում, վերջին ժամանակ  
նա երևաց 1835-ին, մեկ էլ կերևաց 1909—1910  
թվին: Իսկ 1811 թւի երեսցած մեծ գիտաւորը,  
ճիշտ հաշուով պատում է արևի շուրջը 2888  
տարուայ մէջ, և որպէս հաշում են իւր հեռաւորու-  
թեան կէտը արևիցն է 300,000,000,000 մղնն:  
Արեմն մէկ էլ կ'երևաց 4699 թ.: Գիտաւոր աստղերի  
մեծ մասը բաղկացած է գազային կամ հեղուկ նիւթից  
և մինչև անդամ առանց զնդի: Արևին մօսիկ եղող  
մոլորակները աւելի կարծր են և որքան հեռանում  
են, այնքան աւելի մեծ են: Մեր երկրագնդից Արու-  
սեակը և Փալածուն աւելի կարծր են, բայց փոքր  
են, իսկ ուրիշ մոլորակներից երկիրս աւելի փոքր է:

VI

Ազակէսով մեր երկրագունդը — մեր արեգակացինն  
համակարգութեան մէջ կազմում է մի աննշան կէտ,  
և արեգակն ես չնայելով իւր միլիոն ու կէս անդամ  
մեծ լինելով մեր երկրագնդից, իւր ամբողջ համա-  
կարգութեամբը ևս կազմում է մի ամենանշանչն իշտ  
տիեզերքի բազմաթիւարն գակային համակարգութեանց  
մէջ: Հնարելով աւելի մեծ հեռադիտակներ, ինչպէս  
ասացինք, նկատեցին, որ մեզ փոքր երեւացող աստղերը

մի մի արեգակներ են. դոցանից օրինակ Մեծ-  
նասատղը (սորիցԵ), այս աստղը վայլում է կապուտ  
գոյնով Հայկ համաստեղութեան աջ կողմը և երեսում  
է մեղ, որ հեշտ կարելի է գտնել երկնակամարի.  
վերաց Հոկտեմբերից մինչև Փետրուար կէս գիշերնե-  
րից 9-ից մինչև 12 ժամը (երկնակամարի հարաւ-  
արևել կողմ), որին հեռագիտակով նայելիս այնպէս պայ-  
ծառ լոյս է արձակում, որ ոչ թէ դժուար է նորան  
նայել, այլ տեսնողի աչքեր կարող է վնասել, թէև  
մեզանից հեռու է գտնուում, ինչպէս հաշում են  
1,275,715,000,000,000 մղննից աւելի հեռաւու-  
րաթեան վերաց: Գիտութիւնից յայտնի է, որ լոյսը  
մի վայրկեանի մէջ անցնում է 282000 մղնն, իսկ  
ձայնը 175 սաժէն, և այս հիման վերաց հաշուել են  
որ արեգակից մեզ լոյսը հասնում է 8 րոպէի մէջ:  
Իսկ ամենամօտ ուրիշ արեգակնացին համակարգու-  
թեանց միջի աստղերից լոյսը մեզ համում է 17  
ասրուայ մէջ: Մինչև օրս գիտութեան շնորհիւ հե-  
ռադիտակով տեսնուած են ամենահեռաւոր աստղե-  
րից, որոնց լոյսը հասնում է մեղ 130 տարուա: Մի-  
միայն Յարդգողի վերաց 5000-ից աւելի աստղեր են  
հաշուում, որոնք, այնպէս հեռու են միմեանցից—  
շատեր մինչև անդամ այնպէս-ինչպէս Շնիկ աստղը  
մեզանից, բայց մեզ չեն երեսում և եթէ երեսում էլ  
են, այն էլ ինչպէս մի կէտ:

Իսկ եթէ մարզս կարողանար բարձրանալ փորձի համար ամենամօտիկ աստղի վերաց և այնտեղից նացէր մեզ, մեր երկրագնդին, ինչպէս և մեր արեւի շուրջը պատռուող մոլորակները իրանց արբանեակներով նրան անտեսանելի կը լինէին: Միմիան մեր արեւգակը կերեար, այն էլ այնպէս ինչպէս՝ մեզ երևացող աստղերից մինը:

Վերջին ժամանակները արդէն գիտնականները հասել են այն եզրակացութեան և գտել են, որ ինչպէս մեր երկիրը և մոլորակները պատռում են արեւի շուրջը, այդպէս էլ բոլոր երկնային մարմինները շարժում են և ոչ մին իւր տեղում կանգնած չէ. այդպէս էլ ամբողջ տիեզերքը շարժողութեան մէջ է և ինչպէս ուրիշ արեգակնային-համակարգութիւնները, այնպէս էլ մեր արեգակը իւր հետ առաջ բոլոր իւր շուրջը պատռուող մոլորակներին իրանց արբանեակներով և գիտարկութեան պատռում է տիեզերացին մէջ կենդրոն—արեգակի շուրջը 3,811,000 տարուայ մէջ, որը կազմում է մեր արեգակնային համակարգութեան մի շրջանը, արեգակնային մի տարին:

Բայցի դորանից մարդուս աշքերը այնքան տկար են, որ մինչև անգամ մեզ մօտիկ գտնուող մոլորակներից միմիան մի քանիսին ենք տեսնում, իսկ միւսներին չենք էլ կարողանում տեսնել: Եթէ մեր աշքերը աւելի կատարելագործված լինէին և մի քանի

հազար անգամ աւելի սրատես, այն ժամանակ անթիւ անհամար միլիոնաւոր լուսատու մարմիններ կերեալին այնաեղ, ինչտեղ որ այժմ մեզ ոչինչ չէ երեսում և անթիւ էլ աւելի նոր հրաշքների ահազին քանակութիւն կ'յայտնուէր: Այսպէս ամենայն լուսատու երկնային մարմինները ունեն իրանց գործունէութեան որոշեալ շարժումը, ընթացքը և ուղղութիւնը: Եւ ամենայն տիեզերացին մարմին ունի իւր բնակիչները, որոնք իրանց կեղրոն—(արեգակից) աղբիւրից ստանում են լոյս, կենդանութիւն, ոյժ և ուղղութիւն: Զայելով այդ անհամար բազմութեանը և նոցա ընթացքին, այդ բոլորն այնպէս է դասաւորուած, մինը միւսի հետ այնպէս է զուգաւորուած, որ բոլորը իսկդժբանէ յետ է ընթանալով յայտնի ուղղութեամբ, հասնում են իրանց նպատակին և վախճանական կէտին: Բոլորը գործում են ներդաշնակ, շարժւում են արագ, անդադար և անփոփոխ, միւսնոյն ժամանակ—մինը միւսի ընթացքը և շարժումը չխափանելով, կազմում են մի ընդհանուր երկնային մարմինների ներդաշնակութիւն սիստեմայն—ընութեան ամենախիստ օրինքի տակ և ամենաճիշտ կարգապահութեամբ: Երկրացին արարածներից ոչ ոք չի կարող չափել և հաշեել այդ բոլոր արեգակների և աշխարհների քանակութիւնը, հեռաւուրութիւնը, մեծութիւնը, կապակցութիւնը, շարժողութիւնը և թէ երբ կը կորցնէն իրանց լոյսը

և ոյժը և թէ երբ էլ և կը լինի այդ բոլորի պիզբը  
և վերջը; Միայն մի բան հաստատ կարելի է ասել, որ ան-  
հուն տիեզերքի մէջ՝ Արարչի իմաստուն կարգադրու-  
թեան տակ, մշտնջենաբւորապէս թագաւորում է անվերջ  
կենդանութիւն, զօրութիւն և շարժողութիւն, և առեն  
բան արեզերքի մէ պատմում է Արարչի անչափ Մեծու-  
թիւնը, նախախնամութեան կենդանի ոյժը, բնութեան  
անբացարելի խորհուրդը և երկրային արարածներին  
(մեզ մահկանացուներիս) իրանց արբազան պարագան  
րութիւնները գէպի փառահեղ առեղծագործող Աս-  
տուածութիւնը:

Խակ մահկանացու մարդը քննելով՝ անդադար  
ուսումնասիրելով՝ ասողալից երկինքը և խստվանելով  
իւր մասց թուլութիւնը հասնելու զարմանալի և  
հրաշալի առեղծագործութեանց գաղտնիքներին, —  
հիացած փառաբանում է առեղծագործող Արարչին և  
խոնարհում է իւր զլուխը, նորա անհմանալի և ան-  
բացարելի անօրէնութեան՝ անվերջ և անսկիզբ էու-  
թեան առաջ:

Ահա այն օրինակելի իմաստութեան ուսումն՝ որ  
աւանդում է տիեզերագրութիւնը և այն սրբազան  
քարքանելի պատզամը, որ տալիս է մեզ մահկանա-  
ցուներիս՝ փառահեղ և բաշալի ասողալից երկինքը:

# ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1) Գաղքի աղաթ (մի մասը միաւն) տոկ. 1869 թ. 5 կ.  
 2) «Ծոցի» օրացուց 1888 թ. . . . . 5 "  
 3) — — 1889 " . . . . . 5 "  
 4) — — 1890 մ. . . . . 5 "  
 5) — — 1891 " . . . . . 5 "  
 6) — — 1892 " . . . . . 15 "  
 7) Պատկերազարդ 1889 " . . . . . 20 "  
 8) — — 1891 " . . . . . 20 "  
 9) — — 1892 " . . . . . 25 "  
 10) «Հաստատական» 1892 (շքեզ լիտոգրաֆիա-  
     կան տառնից տոելի պատկերավ). . . . . 50 "  
 11) «Կենդանի թագուած մհուած-կարծեցիալնիրի  
     մասն», . . . . . 3 "  
 12) «Առաջալից երկինքը և երկրագունդը». . . . . 5 "

ՊԱՏՐՈՒՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

- 13) «Առաջակ Պարիվե» (կենսագլուռ թիւն):  
 14) «Ժաղավագական հնարքներ և դարմաններ»:  
 15) «Քրիստոնէի արիւնը հրեակը զարծ են ածմամ թէ նշա:  
 16) «Աղատութեան կրակը կամ Ա. Կարապետի ուխտը»:

Գնել յանկացողները կարող են զիմել մեր զբագլ-  
 ամանոցը թիվլիզում կամ ուղղակի ինձ հետեւալ հա-  
 յել. Տիֆլիս, Մակար Կիմիշյանց.

ՀՀ Ազգային գրադարան



NL0342334

